



ԿԼԻՄԱ

2023 թվականի գարնան սեզոնը դասվեց «էքստրեմալ տաք» գարունների շարքին. այն երկրորդ տաքն էր սկսած 1935 թվականից, իսկ ամենատաք գարունը դիտվել է 2018 թվականին էր: Գարնան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 7.1 °C, որը նորմայից բարձր էր 2.8 °C-ով, սեզոնային գումարային տեղումները՝ 200.9 մմ, կազմել է նորմայի 95.2 %-ը:



Պահպանված 1. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը




Պահպանված 2. Ամսական, սեզոնային տեղումների քանակը

Գարնան երեք ամիսներին էլ օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր են եղել 1961-1990թթ. նորմաներից: Առանձնապես տաք է եղել մարտ ամիսը. այն ամենատաքն էր սկսած 1935 թվականից, միջին ամսական ջերմաստիճանը մարտին 4.5 °C, որը նորմայից բարձր էր 5.9 °C-ով: Տեղումները գարնանը դիտվել են նորմային մոտ, բացառությամբ՝ մայիսի, երբ դիտվել է նորմայից պակաս՝ կազմելով նորմայի 81 %-ը:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից




Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից

Գարնան միջին ջերմաստիճանի աճը 1935-2023թթ. կազմել է 1.9 °C, իսկ տեղումները նվազել են 13 %-ով:



Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից գարնան սեզոնին 1935-2023 թթ




Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից գարնան սեզոնին 1935-2023 թթ

Կովկասի տարածաշրջանի ջերմաստիճանի և տեղումների շեղումներ


Համաձայն ERA5 գլոբալ ռեանալիզի տվյալների 2023 թվականի գարնանը օդի ջերմաստիճանը Կովկասի տարածաշրջանում նորմայից բարձր է եղել, առավելագույն շեղումներ գրանցվել են Հայաստանի տարածքում՝ մինչև 3-3.5°C: Մթնոլորտային տեղումները նորմայից բարձր եղել են արևմտյան շրջաններում (տեղ-տեղ 140-180%), կենտրոնական և հարավային շրջաններում տեղումները եղել են նորմային մոտ, իսկ արևելքում բացասական շեղումով՝ նորմայի մինչև 80%:

Monthly Temperature anomalies South Caucasus
Spring 2023 (1981-2010 base period), ERA5



Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C) Կովկասում


Monthly Precipitation anomalies(%) South Caucasus
Spring 2023 (1981-2010 base period), ERA5



Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից (%) Կովկասում


Կլիմայական ինդեքսներ

Ամենօրյա առավելագույն ջերմաստիճանի ամսական առավելագույնի մեծությունը (TXx) 2023թ գարնան սեզոնին եղել է բարձր (1961-1990թթ) նորմայից: Առավելագույն դրական շեղումը եղել է Սևան լճային՝ 4.5 °C, Մեղրի և Բագրատաշեն կայաններից յուրաքանչյուրում 3.4 °C :




Գծապատկեր 5. Օրական առավելագույն ջերմաստիճանի (°C) (TXx) արժեքները 2023 թվականի գարնանը (կարմիր) և նորման (կապույտ)

Օրական առավելագույն ջերմաստիճանի ամսական նվազագույնի մեծությունը (TXn) 2023թ. գարնանը նորմայից բարձր է դիտվել միջինում 5 °C-ով, առավելագույն դրական շեղումը եղել է Արագած բ/լ՝ 13.6 °C, Գյումրի՝ 9.4 °C և Արթիկ՝ 9.1 °C կայաններում:




Գծապատկեր 6. Առավելագույն ջերմաստիճանի ամսական նվազագույնի արժեքները (TXn) 2023 թ գարնանը և նորման

Օրական նվազագույն ջերմաստիճանի ամսական առավելագույնի մեծությունը (TNx) 2023թ գարնան սեզոնին եղել է նորմայից բարձր միջինում 1.5 °C: Առավելագույն դրական շեղումը եղել է Ապարան՝ 7.7 °C և Իջևան՝ 4.7 °C կայաններում:



Գծապատկեր 7. Օրական նվազագույն ջերմաստիճանի ամսական առավելագույն (TNx) արժեքները 2023 թվականի գարնանը և նորման

Ամենօրյա նվազագույն ջերմաստիճանի ամսական նվազագույնի մեծությունը (TNn) 2022թ. գարնան սեզոնին եղել է նորմայից (1961-1990թթ) բարձր միջինում 9,1 °C-ով: Առավելագույն դրական շեղումը եղել է Մասրիկ՝ 16,1 °C, Աշոցք՝ 16,5 °C և Թալին՝ 15,5 °C կայաններում :



Գծապատկեր 8. Օրական նվազագույն ջերմաստիճանի ամսական նվազագույն արժեքները (TNn) 2023 թվականի գարնանը և դրանց նորման

Ապրիլ-մայիս ամիսների երաշտային պայմանները

2023 թվականի ապրիլ-մայիս ամիսներին երաշտային պայմանների ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 38 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են ամբողջ տարածքի համար: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգերով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն:


Աղյուսակ 1. Երաշտի ինտենսիվության գնահատումը, 2023թ. 2-րդ եռամսյակում

N	Մարզ	Կայան	01.04-10.04	11.04-20.04	21.04-30.04	01.05-10.05	11.05-20.05	21.05-31.05
1	Կոտայք	Եղվարդ	5	5	5	5	4	3
2	Արագածոտն	Աշտարակ	5	5	5	5	3	2
3	Սյունիք	Մեղրի	4	4	3	5	5	5
4	Արարատ	Արարատ	5	5	5	5	3	2
		Ուրցաձոր	4	5	5	5	5	4
		Արտաշատ	5	4	5	3	3	3
5	Արմավիր	Արմավիր	5	5	5	5	3	3
		Մերձավան	5	5	5	4	3	3

Ինչպես երևում է աղյուսակից միջին և ուժեղ կարգի երաշտներ դիտվել են մայիսի երկրորդ և երրորդ տասնօրյակներին հիմնականում Արարատյան դաշտի առանձին կայաններում:

Արեգակնային ճառագայթում

Գարնան ամիսների արեգակնային ճառագայթման բաշխման քարտեզներից երևում է, որ մարտ ամսին գրանցված արժեքները ամենացածրն են գարնան սեզոնի ընթացքում (36-73 Վտ/մ²), բացառությամբ Վայոց Ձորի ու Արարատյան դաշտի մի հատվածի, որտեղ գրանցվել է մինչև 110 Վտ/մ²: Ապրիլին առավելագույն արժեքներով աչքի են ընկել Արարատյան դաշտն ու Վայոց Ձորի արևելյան շրջանները՝ մինչև 120-130 Վտ/մ²: Մայիսին արեգակնային ճառագայթման արժեքները աստիճանաբար նվազում են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք: Առավելագույն արժեքներ գրանցել են Արարատյան դաշտում, Վայոց Ձորում (150-160 Վտ/մ²), նվազագույն արժեքներով աչքի են ընկել Լոռվա և Տավուշի մարզերը (73-100 Վտ/մ²):




Գծապատկեր 9. Գարնայիք ճառագայթման արժեքները (Վտ/մ²) ըստ արբանյակային դիտարկումների

Տաք ալիք

2023 թ. գարնանը տաք ալիք դիտվել է մարտի 1-8-ը, մարտի 10-19-ը, մարտի 21-30-ը, ապրիլի 20-23-ը և ապրիլի 16-30-ը, որն արտահայտվել է հանրապետության ողջ տարածքում:

Արտաշատում առավելագույն ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից կազմել է 11.3 °C, միջին ջերմաստիճանի առավելագույն շեղումը՝ 10.4 °C:


Համեմատած բազմամյա տվյալների, տաք ալիքով օրերի թիվը բոլոր կայաններում եղել է նորմայից բարձր՝ միջինը 6-7 օրով: Մեղրիում տաք ալիքով օրերի թիվը մոտ է եղել 1961-2023թթ. ժամանակահատվածի առավելագույնին և կազմել է 29 օր:



Փճապատկեր 10. Տաք ալիքով օրերի թիվը 2023 թ գարնանը համեմատած 1961-2023 թթ ժամանակահատվածում դիտված առավելագույն տաք ալիքով օրերի թվի հետ

Քամու բաշխումը

Գարնան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800մ բարձրություններում գրանցվել է 1,5 մ/վ, 800-1000 մ բարձրություններում՝ 1,9մ/վ: Բացասական շեղմամբ քամի է գրանցվել 1500մ-ից բարձր շրջաններում: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է 2500 մ-ից ավել բարձրալեռնային գոտում՝ 4.8 մ/վ:




Բարձրություն, մ	Գարուն	Նորմա	Շեղում
500-800	1.5	1.2	0.3
800-1000	1.9	1.9	0.0
1000-1500	1.5	1.3	0.2
1500-2000	1.9	2.1	-0.2
2000-2500	3.3	3.4	-0.1
2500 - ավել	4.8	4.9	-0.1

Փճապատկեր 11. Քամու արագությունը (մ/վ) գարնանը

Օդի հարաբերական խոնավություն

2023թ. գարնան միջին հարաբերական խոնավությունը բոլոր բարձրություններում եղել է նորմայից բարձր միայն 800-1000 մ բարձրության վրա դիտվել է նորմայից ցածր:




բարձրություն	գարուն	նորմա
500-800	72	70
800-1000	57	58
1000-1500	68	67
1500-2000	74	70
2000-2500	78	74

Փճապատկեր 12. Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ բարձրությունների

Մթնոլորտային ճնշումը

2023թ. գարնան մթնոլորտային ճնշումը գրեթե բոլոր կայաններում եղել է նորմայից ցածր կամ նորմային հավասար:



Քարձրություն	գարուն	նորմա
500-800	943.8	945.4
800-1000	914.9	915.5
1000-1500	876.6	877.8
1500-2000	817.6	817.7
2000-2500	773.1	773.1

Գծապատկեր 13. Մթնոլորտային ճնշումն (հ Պա) ըստ բարձրությունների


Երևան

Երևանում մարտ ամսվա միջին ջերմաստիճանը եղել է +11,7 °C, շեղումը նորմայից կազմել է +5,4 °C: Տեղումների քանակը եղել է 24,1 մմ, որը կազմել է մարտ ամսվա նորմայի 87 %: Մարտի 13-14-ը օդի առավելագույն ջերմաստիճանները կազմել են 21-23 °C, և գերազանցել են այդ օրերի երբևիցե դիտված առավելագույն ջերմաստիճանները:




Ապրիլ ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 13,8 °C, շեղումը նորմայից կազմել է +0,8 °C: Տեղումների քանակը եղել է 31,1 մմ, որը կազմում է ապրիլ ամսվա նորմայի 66 %:

Մայիս ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 18,4 °C, շեղումը նորմայից կազմել է +0,7 °C: Տեղումների քանակը եղել է 16,4 մմ, որը կազմել է մայիս ամսվա նորմայի 37 %:

Մայիսի 4-ին դիտված նվազագույն ջերմաստիճանը՝ 3,5 °C, 0,1 °C-ով ավելի ցածր էր այդ օրվա երբևիցե դիտված նվազագույն ջերմաստիճանից:



Գծապատկեր 14. Օրական ջերմաստիճանները Երևանում 2023 թ գարնանը



Գծապատկեր 15. Երևանում Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից